# ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

**մրցույթի անցկացման մասին**

Առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշման հավելվածի 25-րդ կետով, շրջակա միջավայրի նախարարի 2024 հուլիսի 25-ի Միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին N 293-Ա, N 294-Ա, N 295-Ա և N 296-Ա հրամաններով՝ շրջակա միջավայրի նախարությունը հրավիրում է բոլոր սուբյեկտներին մասնակցելու պետական անտառային նշանակության հողերից հանքաի և գրոսաշրջության կազմակերպման նպատակով՝ վարձակալության իրավունքով տրամադրման մրցույթին:

**Մրցույթի կազմակերպիչի անվանումը, մրցույթի կազմակերպման վայրը հասցեն .**

Մրցույթը կազմակերպում է շրջակա միջավայրի նախարարությունը: Մրցույթի անցկացման վայրն է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 (**հանձնաժողովի քարտուղար՝ Գ.Պետրոսյան, հեռ. 011818538**):

**Մրցույթի մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարը.**

Մրցույթին մասնակցության նախավճարի դրամային հաշվեհամարն է ֆինանսների նախարարության գործառնական վարչության Երևանի N 1 ՏԲԳ հաշվեհամարը, **900018002270:**

**Մրցույթին մասնակցության հայտին կից պահանջվող փաստաթղթերի ցանկը.**

Համաձայն ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի Պետական անտառները և անտառային հողերն օգտագործման տալու կարգը սահմանելու մասի թիվ 806-Ն որոշման՝ մրցույթին մասնակցության հայտին (N 2 ձև) կից ներկայացվում են՝

1. անտառօգտագործման ծրագիրը (գիտահետազոտական նպատակներով օգտագործման դեպքում՝ տվյալներ ծրագրվող գիտահետազոտական աշխատանքների ուղղվածության և հետազոտվող օբյեկտի մասին).

1.1 նախատեսվող միջոցառումների իրականացման ժամանակացույցն ըստ իրականացման տարվա.

1.2 ներդրումների չափը և ժամանակացույցն ըստ ներդրումային յուրաքանչյուր տարվա.

1.3 սխեմաներ և քարտեզներ.

1.4 ակնկալվող արդյունքը.

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ 7873
«04» 09 2024թ.

2. նախավճարի մուծումը հաստատող փաստաթղթի պատճենը.
3. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար՝ համապատասխանաբար պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.
4. անձնագրի պատճենը՝ ֆիզիկական անձանց համար.
5. հայտատուի կողմից տրված լիազորագիրը, եթե մրցույթին ներկայանում է լիազորված անձը:

<u>**Մրցութային հանձնաժողովի անդամների կողմից խրախուսվում է մրցույթին մասնակցող հայտատուների կողմից ներկայացված անտառօգտագործման հրատեսական, առավել ներդրումային ծրագրեր և նվազագույն տարեկան վարձավճարի չափից ավել վարձավճար առաջարկող հայտերը:**</u>

**Մրցույթի պայմանները, մրցույթի հաղթողին որոշելու կարգը.**

Հանձնաժողովի անդամները մրցույթին մասնակցող հայտատուների կողմից ներկայացված անտառօգտագործման ծրագիրը գնահատում են ՀՀ կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի թիվ 806-Ն որոշման 1-10 բալանոց միավորների համակարգով:

Մրցույթում հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որի ներկայացրած հայտի գնահատված միավորների հանրագումարն առավելագույնն է մնացած մասնակիցների միավորների համագումարից, բայց ոչ պակաս հանձնաժողովի անդամնեի կողմից գնահատվելիք առավելագույն միավորների հանրագումարի կեսից:

Հավասար միավորների դեպքում հաղթողը որոշվում է վիճակահանությամբ:

Մրցույթում հաղթող չճանաչված մասնակիցները մրցույթի մասնակցության նախավճարի վերադարձման նպատակով դիմում են տրամադրողին, որը դիմումն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում նախավճարի գումարը վերադարձնում է նրանց:

**Մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցը մրցույթի նախապատրաստական աշխատանքների հետ կապված բոլոր տեսակի ծախսերը 10 աշխատանքային օրվա ընթացքում միանվագ վճարում է ֆինանսների նախարարության գործառնական վարչության Երևանի N 1 ՏՖԳ հաշվեհամարին 900018002270 :**

Եթե մրցույթում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է արձանագրությունն ստորագրելուց կամ 15 օրվա ընթացքում պայմանագիր կնքելուց, ապա նրա վճարած նախավճարը չի վերադարձվում:

Նվազագույն տարեկան վարձավճարի չափը ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ

| Հ/Հ | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | «Հայանտառ» ՊՈԱԿ «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի Երնջատափի անտառպետության տարածք, 0.46895 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-063-0104-0017) հանքաքարի և գրոսաշրջության կազմակերպման նպատակով, 20 տարի ժամկետով: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: | 137663 Նվազագույն տարեկան վարձավճարի չափը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/ | 6883 | 95000 | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 10:00 |
| 2 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև | «[illegible]» ՊՈԱԿ «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի [illegible] անտառպետության տարածք, 1.27072 հա (կադաստրային | 440381 Նվազագույն տարեկան վարձավճարի | 22019 | 95000 | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 10:40 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | ծածկագիր02-028-0240-0007) հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, 20 տարի ժամկետով: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: | չափը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/ | | | 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | |
| 3 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | «Հայանտառ» ՊՈԱԿ «Արագածոտնի անտառտնտեսություն» մասնաճյուղի Բյուրականի անտառպետության տարածք, 1.12 հա (կադաստրային ծածկագիր՝ 02-028-0241-0002) հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, 20 տարի ժամկետով: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: | 388147 Նվազագույն տարեկան վարձավճարի չափը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/ | 19407 | 95000 | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 11:20 |
| 4 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | «Հայանտառ» ՊՈԱԿ «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ջերմուկի անտառպետության տարածք, 0.34383 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-002-0008-0014) հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, 20 տարի ժամկետով: Անտառային հողի նկատմամբ սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: | 126131 Նվազագույն տարեկան վարձավճարի չափը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/ | 6307 | 95000 | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային օրերին ժամը 10:00-17:00 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 12:00 |
| 5 | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային | «Հայանտառ» ՊՈԱԿ «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Եղեգիսի անտառպետության տարածք, 1.25 հա (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0138-0008) հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, 20 տարի ժամկետով: Անտառային հողի նկատմամբ | 458550 Նվազագույն տարեկան վարձավճարի չափը /ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ/ | 22928 | 95000 | 2024 թվականի հուլիսի 31-ից մինչև 2024 թվականի օգոստոսի 29-ը ներառյալ (աշխատանքային | 2024 թվականի սեպտեմբերի 5-ին ժամը 12:40 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | օրերին ժամը 10:00-17:00 | սահմանափակումներ (ներառյալ՝ սերվիտուտներ) առկա չեն: | | | | օրերին ժամը 10:00-17:00 | |

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«25» «հուլիսի» 2024 թ. N 295-Ա

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806 Ն որոշման հավելվածի 30-րդ, 31-րդ կետերով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Ջերմուկի անտառպետության տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության հողերից (կադաստրային ծածկագիր՝ 10 002 0008 0014) 0.34383 հա անտառային տարածքը հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Սերգո Աթանեսյան | շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար (Հանձնաժողովի նախագահ). |
| Վիգեն Չիլինգարյան | «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի խորհրդական (Հանձնաժողովի նախագահի տեղակալ). |
| Աշոտ Գիլոյան | տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ. |
| Մկրտիչ Մկրտչյան | կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետի տեղակալ. |

| | |
|---|---|
| Կարեն Սիմոնյան | քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական, |
| Ամատունի Արշակյան | էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ, |
| Գեղամ Մարգարյան | Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, |
| Աղասի Առաքելյան | Ջերմուկի համայնքապետարանի հողաշինարար (համաձայնությամբ)։ |

2. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները վերապահել շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Գագիկ Պետրոսյանին։

3. Հանձնաժողովի նախագահին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո աշխատանքային եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հրապարակային ծանուցման տեքստի հաստատումը և մրցույթ անցկացնելու մասին հրապարակային ծանուցումը։

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

11/25/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840558

«25» նոյեմբերի 2024թ.

ք. Երևան

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

«25» «հուլիսի» 2024 թ. N 296-Ա

## ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 24-ի N 806-Ն որոշման հավելվածի 30-րդ, 31-րդ կետերով և վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության «Վայոց ձորի անտառտնտեսություն» մասնաճյուղի Եղեգիսի անտառպետության տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անտառային նշանակության հողերից (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0138-0008) 1.25 հա անտառային տարածքը հանգստի և զբոսաշրջության կազմակերպման նպատակով, վարձակալության իրավունքով տրամադրելու համար ստեղծել մրցութային հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Սերգո Աթանեսյան | շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղար (Հանձնաժողովի նախագահ), |
| Վիգեն Չիլինգարյան | «Հայանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի խորհրդական (Հանձնաժողովի նախագահի տեղակալ), |
| Աշոտ Գիլոյան | տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության պետ, |
| Մկրտիչ Մկրտչյան | կադաստրի կոմիտեի գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետի տեղակալ, |

| | |
|---|---|
| Կարեն Սիմոնյան | քաղաքաշինության կոմիտեի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության առանձին գործառույթներ համակարգող խորհրդական, |
| Ամատունի Արշակյան | էկոնոմիկայի նախարարության գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման բաժնի գլխավոր մասնագետ, |
| Գեղամ Մարգարյան | Վայոց ձորի մարզպետարանի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, |
| Սամվել Մարտիրոսյան | Եղեգիս համայնքի ղեկավարի տեղակալ (համաձայնությամբ): |

2. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները վերապահել շրջակա միջավայրի նախարարության իրավաբանական վարչության գլխավոր մասնագետ Գագիկ Պետրոսյանին:

3. Հանձնաժողովի նախագահին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո աշխատանքային եռօրյա ժամկետում ապահովել մրցույթի հրապարակային ծանուցման տեքստի հաստատումը և մրցույթ անցկացնելու մասին հրապարակային ծանուցումը:

Հ. ՍԻՄԻԴՅԱՆ

7/25/2024

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

«25» հուլիսի 2024թ.

ք. Երևան